ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՈՒԱՅԹ ՓԼԷՅՆՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

ՈՒԱՅԹ ՓԼԷՅՆՍԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒՆ

Սրտի անհուն ուրախութեամբ և հոգևոր ցնծութեամբ տեղեկացանք որ ահա աւարտած է Ուայթ Փլէյնսի եկեղեցւոյ կառուցումը և մօտ ատենէն պիտի կատարուի անոր օծումը:

Ամերիկահայոց Թեմի հաստատման 100-ամեակին առիթով չէր կարելի աւելի ուժեղ և վաւերական ձևով յայտնել սէրը և երախտիքը առ Աստուած բայց միայն գերազանցօրէն աստուածահաճոյ այսպիսի վկայութեամբ մը, նոր ու փառակերտ եկեղեցական շէնք մը ընծայելով մեր սիրեցեալ ու հաւատացեալ ժողովուրդի հոգևոր և ազգային կեանքի ծաղկման և զարգացման համար: Եկեղեցի շինելը սոսկ նիւթեղէն շէնք մը կառուցանել չի նշանակեր: Եկեղեցաշինութիւնը հոգևոր կեանքի առողջութեան, կենսունակութեան և զարգացման նշան է և մղում՝ միանգամայն: Մենք եկեղեցւոյ նիւթեղէն շէնքն է որ կը կառուցենք, բայց եկեղեցիով մե՛նք է որ հոգևորապէս կը վերակառուցուինք, կը վերանորոգուինք և կ'երջանկանանք:

Դուք հայ ժողովուրդի պատմութեան շարունակման ուղիղ ճանապարհի վրայ էք որովհետև մեր ազգը կառուցողներու ազգ է եղեր և կառուցուածներուն մէջ ամէնէն առատ թիւ և գեղեցիկ ոճ ունեցողները եղեր են եկեղեցիները և վանական համալիրները:

Մեր բոլորին սկզբնատիպ եկեղեցիէն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն բիւր ողջոյն ձեր բոլորիդ՝ բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանին, ժրաջան հոգևոր հովիւ՝ Տ. Գարեգին Աւագ Քհնյ. Գասպարեանին, եկեղեցւոյ Հոգաբարձութեան, բարերարներուն, Շինութեան Ցանցնախումբին և բոլոր մասնակիցներուն և նուիրատուներուն: Թող Ամենաբարին Աստուած Ձեր զոհաբերութեան փոխարէն լիագոյնս վարձահատոյց ըլլայ «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր» (ՄԱՐԿ. Դ. 8):

Եկեղեցւոյ շէնքի կառուցումէն ետք կը սկսի ձեր բուն աշխատանքը,

այն է՝ եկեղեցին շէն պահել, ժողովուրդով լեցուն, աղօթքով օծուն, արարողութեամբ և Բանին կենաց քարոզութեամբ ծաղկուն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հոգևոր սրբաճաճանչ տունէն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն կ'օրհնենք ձեզ և կ'ուզենք որ լաւ իմանաք որ Մեր հայրական սէրն ու հոգածութիւնը պիտի ըլլան ձեզ հետ միշտ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 10 Օգոստոսի
Ցամի Տեառն 1998 և ի Թուին Հայոց ՌՆԽԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/203